Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3702

Fwqn 1901

1362
891.71
L-46

Fwqn
1901

6.

891.71
L-46

Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

ԴԵՒ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԷՊ. (1829—1838)

Թարգմանեց
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՂԱՄԱԼԵԱՆ
(Թիւրաս):

2003

2011

ԲԱԳՈՒ
Տպարան „ԱՐՕՐ“
1901.

891.71
L-46

Дозволено цензурой. Тифлисъ. 27 Апрѣля 1901 г.

ՀՐԱՏԱՐԱԿՉԻՑ

Հանգուցեալ եղբօրս ձեռագիրների մէջ գտնելով Լերմոնտովի «Դեւ» Պօեմայի այս հայերէն թարգմանութիւնը, կարեւոր համարեցի յոյս ընծայել սոյն տպագրութեամբ:

Թէպէտ մահը արգելք է եղել հանգուցեալին իւր թարգմանութիւնը աւելի մշակելու եւ նրա լեզուի անհարթութիւններն յղկելու, այսու ամենայնիւ, ես աւելորդ չը համարեցի նրա տպագրութիւնը մտածելով թէ՝ «Դեւ»-ի արդէն գոյութիւն ունեցող թարգմանութեանց դուռմ, գուցէ, սա եւս պիտանի ծառայութիւն մատուցանէ այն հայ գրագէտին, որը կոչուած կը լինի Լերմոնտովի գործերի ընտրելագոյն թարգմանութիւնը մեզ տալու:

Սարգ. Աղամալեան:

44165-ա.հ.

28595-62գ

Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

ԴԵՒԸ

(Դէմոն)

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

I.

Տրտմազգեաց Դեւը, ոգին ամբոստան,
Մեղաւոր երկրիս նախորում էր վերան
Եւ յիշատակները իւր լաւ օրերին
Նրա առաջն էին խռնվում խմբովին...
Այն օրերին, երբ լոյսի տաճարում,
Ինչպես քերովբէ էր նա դեռ փայլում,
Երբ որ գիսաւոր աստղը փախչելով
Սիրուն ողջունի քաղցրիկ ժպիտով
Սիրում էր նրա հետ փոխարինուել:
Ամպերի միջից յաւիտենական
Գիտուրեան ծարաւ երբ զննում էր նա
Կարաւանները յար թափառական
Ցանած լոյսերի տարածքի վերան:
Երբ նաւատում էր, երբ սիրում էր նա,
Ստեղծագործման նախնին երջանիկ,
Չը գիտեր կասկած, չը գիտեր չարիք,
Եւ չէր սպառնում դեռ նրա մտքին
Ունայն դարերի մի շարք տխրագին...
Եւ այլ շատ բաներ... բոլորի մասին
Նա յիշելու ոյժ չ'ուներ բնաւին:

II.

Դատապարտեալը վաղուց էր յածում
Դատարկ աշխարհում առանց ապաստան:
Մի դարի եֆից միւս դարն էր վազում,
Ինչպես բոպեի եֆից միւս բոպեն
Շրջան առնելով միշտ միմեանց նման:
Տիրապետելով փանաֆի երկրին,
Նա չարն էր ցանում առանց գոհութեան.
Բնաւին մի տեղ նա իւր արհեստին
Դիմադրութեանց չը հանդիպեցաւ
Եւ չար գործելուց վերջը ձանձրացաւ:

III.

Եւ Կովկաս լեռան գագաթի վերայ
Դրախտից ամսորեալն էր թեւապարում.
Կազբեկը ներքեւից, իբր ադամանդեայ՝
Ցաւիտենական ձիւնով էր փայլում.
Եւ խոր անդունդի մէջ սեւին տալով,
Ինչպես որ մի ծերպ—օձի ապաստան,
Գալարվում էր Դարեալը օձաձեւ.
Եւ Թերեք ոսչելով առիւծի նման
Թաւամազ բաշով լիսեռի վերան
Մռնչիւն էր հանում. եւ սարի գագանն
Եւ հախրող թռչունը երկնակամարի
Ունկնդիր էին նորա կարկաչման,
Եւ ոսկի ամպերը հեռու հարաւի
Դեպ հիւսիս էին ուղեկցում նրան.
Եւ քարաժայռերը ստուար խումբերով

Մի խորհրդաւոր ծանրացած նինջով
Կատարնին դեպ նա էին խոնարհել
Դիտելով նորա փայլող ալիքներ.
Եւ ամրոցների բուրգերը՝ ժայռերից
Նայում էին խրոխտ՝ մեզը թափանցանց.—
Կովկասի դռներում պահակի կանգնած
Պարեկապանները հսկա՛յ, վիթխարի:
Եւ սքանչելի էր շուրջանակի,
Բոլոր տիեզերք. բայց հպարտ ոգին
Արհամարհական ձգեց մի հայեացք
Իրեն Աստուծոյ ձեռակերտ գործին
Եւ նրա դէմքին ոչինչ չը ցոլաց:

IV.

Եւ նորա առաջ այլ տեսարաններ
Զուարթ գոյներով էին նկարվում՝—
Ճոխ Վրաստանի սիրուն հովիտներ
Կանաչ գորգի պես ընկած էին հեռուն:
Երկրիս երջանի՛կ, փառաւո՛ր անկիւն.
Աշտարակաձեւ շատ աւերակներ,
Գոյն գոյն քարերից յատակ ունեցող
Կարկաչ հանելով վտակներ վազող,
Վարդերի թուփեր, ուրտեղ սոխակներ
Երգ են յօրինում գեղունիներին,
Որք չեն ձայնակցում նրանց սիրոյ ձայնին.
Սօսի ծառերի ստուերք բազմաջով
Պսակաւորուած բանձր բաղեղով,
Քարայր ու անձաւ ուր թագ է կենում

Տօրագին օրերը երկչոտ եղջերուն,
Եւ փայլ, եւ կեանք, ծառերի սօսիւն
Եւ բիւրանկչիւն խօսքերի ձայներ,
Հազար բոյսերի գաղտնի շշնչիւն
Եւ մեջօրէի տօրը հեշտաբեր,
Քաղցրաբոյր ցողով թրջուած գիշերներ,
Եւ աստղեր փայլուն, ինչպէս աչկունքը,
Իմչպէս հայեացքը վիրուհուն սիրուն:
Սակայն բընութեան շրթեղութիւնը
Զար նախանձից զաս ոչինչ չընարժեց
Անօրամարմին ախտոռեալի մէջ,
Ո՛չ նոր զգացմունք, ո՛չ էլ նոր ուժեր—
Եւ այն ամենը, ինչ նա տեսնում էր,
Արհամարհում էր եւ կամ ատում էր:

V.

Բարձր տուն, լայն բակ էր շինել տուել
Ծերունի Գուդալը իրեն համար...
Տանջանք, արտասուք շատ էր պատճառել
Նա սրուկներին հրամանակատար:
Այգուց դիմացի լեռների լանջին
Նորա պատերից ընկնում է սուտեր.
Ժայռի վրա փորած կան ատիճաններ.
Նրանք անկիւնի բուրգից տանում են
Դէպ գետը. նրանցով՝ թեթեւ սահելով
Գլուխը ծածկած սպիտակ ողով,
Իշխանազն Թամարը մատաղատի
Դէպի Արագվա գնում է ջրի:

VI.

Միշտ լուռ, անմռունչ դէպի հովիտներ
Այս տունը՝ ժայռից նայում է եղել.
Բայց այսօր մի մեծ խնջոյք կայ այնտեղ
Հնչում է զուրնան, առաս է գինին էլ.—
Գուդալ իւր դուստրը նշան է դրել
Եւ մի խնջոյքի բոլորին կանչել:
Տանիքի վրա—գորգերով ծածկուած,
Ընկերուհիների հետ հարսն է նստած.
Խաղով, երգերով, ուրախանում են
Հեռու լեռները ծածկել են արդէն
Արեւի կէսը: Կարգով կանոնով
Ծափահարելով նրանք երգում են,
Եւ հարսը մատաղ իւր դափն առնելով
Ու պսակնելով իւր գլխի վրան
Երբեմն թռչում է թռչունի նման,
Երբեմն կանգնում է նայում սակաւիկ,
Եւ թաց հայեացը նրա փայլում է
Արտեւանունքի տակից դեղեցիկ.
Մերթ սեւ յօնքերը թեթեւ շարժում է,
Եւ գորգի վերա սահում, լողում է
Նրա պաշտելի ոտիկն անմեղ.
Եւ նա ժպտում է ժպտով մանկական:
Եւ ալեծածան ջրում խայտացող
Լուսնեակի շողը հազիւ է կարող
Հաւասարուել այն մի ժպիտին
Որ տալիս է կեանքն ու առոյգ հոգին:

VII.

Երդվում եմ աստղովը կէս-գիշերային,
Մուտքի եւ ծագման շողովն արեւին,
Ո՛չ միապետը նոխ Պարսկաստանին
Եւ ո՛չ մի ուրիշ արքայ երկրային
Դեռ չէ համբուրել այդպիսի աչքեր.
Սրսկուող շատրուանը հարեմին շքեղ
Եւ ո՛չ մի անգամ տաք եղանակին
Իրեն ցողերով մարգարտանման
Չէ զովացրել այդպիսի իրան.
Մանկանացուի ձեռքը տակաւին
Սիրելի դեմքի յածելով վերան
Երբէք չէ շոյել այդպիսի մազեր:
Աշխարհս դրախտից զրկուելուց 'ի վեր,
Երդվում եմ, այսպէս մի գեղեցկուհի
Երբէք չէ տեսել արեւն հարաւի:

VIII.

Մի վերջին անգամ նա կախաւում էր...
Աւա՜ղ, առաւօտը վաղ սպասում էր
Նրան, Գուգալի միակ ժառանգին,
Ազատութեան այդ աշխոյժ զաւակին
Մի սրկունու վինակ տխրագին,
Յ'այսօր իրեն խորթ, ուրիշ հայրենիք,
Իրեն անծանօթ ուրիշ ընտանիք:
Եւ գաղտնի կասկածը յանախ, շատ անգամ
Ստուեր էր ձգում սիրուն դեմքի վրան.
Սակայն շարժուածքը նրա աննման

Այնչափ գողտրիկ էր, այնչափ նազելի,
Այնչափ գեղեցիկ եւ պարզութեամբ լի,
Որ երբէ Դեւը մօտից թռչելով
Մի եւ նոյն ժամին նրա վրա նայեր,—
Հին եղբայրներին նորից յիշելով
Պիտ երեսը շրջեր ու հառաչ հաներ...

IX.

Եւ Դեւը տեսաւ... Ու վայրկենապէս
Անբացատրելի մի շփոթութիւն
Նա յանկարծակի զգաց իրեն մէջ:
Նրա համար հոգու ամայութիւնը
Երանաւէտ մի ձայն լցրեց իսկոյն.
Եւ սիրոյ, բարոյ ու գեղեցկութեան
Նորից խելամուտ եղաւ արբութեան...
Երկար ժամանակ քաղցրիկ պատկերովը
Նա զմայլվում էր. եւ ցընորքները
Վաղեմի բախտին անվերջ շղթայով,
Ինչպէս մի ասղ միւսի ետեւին,
Նորա առջեւից գլորվում էին:
Անտեսանելի մի ոյժից բռնուած,
Մի նոր վիշտի հետ նա ծանօթացաւ.
Զգացումը նրա մէջ զարթեցաւ յանկարծ
Երբեմն ծանօթ մի եղանակաւ:
Վերածնութե՞ն էր միթէ սա նշան:—
Հրապուրանքի նենգաւոր բառեր
Իրեն մտքի մէջ գտնել կարող չէր:
Միթէ՞ մոռանալ:—Մոռացումը նրան

Ասուած չէր տուել, բայց եթէ տար էլ,
Երբէք մոռացումը նա չէր ընդունել:
. . . . . .

X.

Անհամբեր փեսան արեւամտին
Հոգին հանելով գեղեցիկ ձիին
Դէպ հարսանեկան խնջոյքն է շտապում:
Անփորձ անվտանգ Արագվի փայլուն
Նա կանաչազարդ հասաւ ափերին:
Ընծաների ծանր բեռների տակին
Դանդաղ քայլերնին հազիւ փոխելով
Նրա եսեւից ընկած է նանպին
Ուղտերի մի կարգ. մերթ փալփլելով
Նրանց բոժոժները հնչիւն են հանում...
Նոյն ինքը իշխանը Սինոդալի
Հարուստ կարաւանն է առաջնորդում:
Գեղեցիկ մէջքին կապած է գօտի,
Թուրի, դաշոյնի յեռուածը նաշխուն
Արեգակի տակ փայլ է արձակում.
Ուսի եսեւից կախուած հրացանը
Քանդակազարդած ունէ կայծանան.
Քամին խաղում է չուխի բեւեռով
Շուրջը ոսկեթել ժապաւէն դրած.
Թամբը կարված է նարոս մեսամուով.
Երասանակից փունջեր են կախուած.
Եւ նրա տակին, փրփուրով պատուած,
Նժոյգ պատուական, մազը ոսկեգոյն:

Ղարաբաղ երկրի աշխոյժ այդ սանիկ
Ականջն է լարում եւ անով սաստիկ
Խորդալով ծուռ է նայում զառվայրից
Դէպ ալիքների յորդան փրփրալից:
Վտանգաւոր, նեղ է գետափի ուղին
Ձախ կողմից ժայռեր, իսկ աջակողմին
Բարկասաստ գետի անդունդն անագին:
Տարաժամում է: Ձիւնապատ սարին
Կատարին վրա հանգաւ ծիրանին.
Մառախուղը յանկարծ ամեն կողմ պատեց...
Եւ կարաւանը քայլը աւելցրեց:

XI.

Եւ անա մատուռ այդ հանպին վերայ...
Այստեղ 'ի վաղուց 'ի Տէր հանգեալ կայ
Ինչ որ մի իշխան, այժմ սուրբ դարձած,
Մի վրիժառու ձեռքով սպանուած:
Այն օրից 'ի վեր թէ դէպ տօն, թէ մարտ,—
Ուր կուզէ լինի—ուղեւոր մարդը
Շտապում լինէր, պիտի կանգ առնէր
Եւ մատուռի մօտ արտանց աղօթէր.
Եւ այդ աղօթքը պահում էր նրան
Մահմեդականի դաշոյնից դաժան:
Բայց պապենական այդ սովորութեան
Ուշ չը դարձրեց նորատի փեսան—
Ներգ անուշքներով Դեւը նենգաւոր
Ցուզել էր նորա մտքերը բոլոր.—
Նա իւր մտքի մէջ մթանը գիշերին

Դրոշմում էր համբոյր հարսի շուրթերին...
Ցանկարծ երկու մարդ առաջը կտրեցին,
Էլ աւել... Թնդիւն... Այդ ի՞նչ պատահեց...
Ասպանդակների վերա կանգնելով
Մորթէ փափախը աչքերը ծգելով
Կորովի իշխանը բառ չ'արտասանեց.
Տանիկ հրացանը ձեռքումը փայլեց,
Մտրակը զարկեց ու արծուաթռիչ
Նա շահատակեց... կրկին կայծակեց.
Եւ սաստիկ գոչիւն, հեծեծումն յուզիչ
Ամբողջ հովիտը դղրդացրին
Կռիւը երկար չ'շարունակուեց
Երկչոտ վրացիք փախին, խոյս տուին:

XII.

Ամեն բան լռեց... խռնուած միասին,
Սարսափով ուղտերը նայում էին
Ձիաւորների դիերին վերան:
Նրանց բոժոժները մերթ հնչում էին.
Կողոպտուած է հարուստ կարաւանը
Եւ քրիստոնեայ դիերի վերան
Գիշերի թռչունն է թեւապարում:
Հանգիստ գերեզման նրանց չէ՞ սպասում
Վանքի՝ կոփածոյ քարերին ներքոյ,
Ուր նրանց հայրերի անիւնն է թաղուած.
Նրանց դագաղին տեղերից հեռու
Պիտ չգա՞ն քոյրեր իրենց մայրերով
Ծածկուած սպիտակ, երկայն քողերով

Վշտահար սրտով եւ լաց ու կոծով:
Բայց դորա փոխան ժայռի տակ, այստեղ,
Սիրով կ'կանգնեն խաչ յիշատակի.
Եւ անուանածիգ գարնանը բաղեղ
Նրան գգուելով կը շաղապատի
Իւր կանաչագոյն զմրուխտի ցանցով.
Եւ յոգնադժուար նանպան ծռելով
Վաստակած անցորդը շատ անգամ կ'գայ
Ասծու ստուերի տակ կը հանգստանայ....

XIII.

Սլանում է ձին եղնից էլ արագ,
Խորդում է—թռչում, կարծես դէպի մարս.
Մերթ իւր ընթացքում յեռ յեռ կ'ընկրկի
Ականջ կը դնի շնչին հովիկի
Ընունգները լայն ուռեցընելով,
Մերթ միանգամից հողն հարուածելով
Մենուած բաշը յանկարծ ցնցելով
Առաջ կ'խաղայ անմիտ թռոյցքով:
Լռիկ մի հեծնորդ կայ վրան նստած.
Մերթ հեծեծում է նա թամբի վերա
Գլուխը բաշին ունելով թեքած:
Երասանակները նա էլ չէ վարում,
Ոտքերը խրել է ասպանդակներում,
Եւ վերից հոսող առատ արիւնը
Նրա հագուստի վրան է երեւում...
Նժոյ'գ դու քաջիկ, քո տիրոջ թեպէտ
Կռուից հանեցիր, բուիր իբրեւ նետ

Բայց անգութ օսի գնդակը դաժան
Խաւարի մէջ էլ հասել էր նրան:

XIV.

Գուդալի տանը սուգ, լաց, ախ ու ոխ.
Դուրսը, բակումը խռնվում է ամբոխ.—
Ո՞ւմ ձին շնչասպառ հասաւ սրընթաց,
Քարերի վրա դռան մօտ ընկաւ.
Ո՞վ է այն հեծնորդը անընչացած.
Խորհրդաւորը նորա թխաթոյր դէմքին
Դեռ կրում էին սարսափը մարտին
Ձէնք եւ հագուստը արիւնաթաթաւ.
Նրա մի վերջի կատաղի սեղմման
Ձեռքը փայտացել էր բաճի վերան:
Քո աչքդ, հա՛ռ դու, նորտի փեսային
Ջ՚տրնկի՞ր երկար գալստեան նանպին.
Նա իշխանական խօսքին տէր եղաւ—
Հարսնեաց խնջոյքին անապարեցաւ....
Բայց կրկին անգամ, աւա՜ղ, ո՛չ երբէք
Նա էլ չի հեծնիլ իւր ձին սանձաբէկ։

XV.

Եւ ուրախ անհոգ ընտանեաց վերան
Ցանկարծուստ տեղաց պատիժ երկնային:
Անբաղդ Թամարը ձայնիւ հեծեծման
Ընկաւ իւր մահնի վրա կուսական.
Արտասուաց շիթեր թափվում են առատ
Կուրծքը անհանգիստ, շնչում է ընդհատ...

Եւ ահաւասիկ կարծես լսում է
Մի ձայն դիւթական, որ մրմնջում է.—
«Մի՛ լար զաւակս, 'ի զուր դու մի՛ լար,

Եւ ահաւասիկ կարծես լսում է
Մի ձայն դիւթական, որ մրմնջում է.—
«Մի՛ լար զաւակս, 'ի զուր դու մի՛ լար,
Քո արցունք՝ անշունչ դիակին համար,
Չէ կարող դառնալ ցող կենդանարար.
Նա պարզ հայեացքն է լոկ մթագնում,
Կուսական այտերն է միայն այրում:
Նա այժմ հեռու է պիտի չ'իմանայ,
Քո դառն վշտին արժէք պիտ չը տայ.
Նրա աչքերի հայեացքը անմարմին
Այժմ գգըւվում է լուսով երկնային,
Նա այժմ լսում է դրախտի մեղեդին...
Ի՞նչ բան են կեանքի երազները յիմար
Եւ խղճուկ կուսի վիշտ ու սուգ խորին
Դրախտի կողմի մի հիւրի համար:
Ո՛չ, հաւատա՛ ինձ, երկրի իմ հրեշտակ,
Մահկանացուի անխուսափ վիճակ
Անգի՞ն տրտմութեանդ չ'արժէ վայրկենին:
«Անվայրափակ օդի ծովում,
Անքի, անղեկ, անառագաստ,
Ամպում հանդարտ են միշտ լողում
Աստեղների խումբեր վաշտ վաշտ:
Երկնի դաշտում լայն, անսահման
Գնում են ամպեր անհետ, թեթեւ,
Փափուկ, ասուեղ հոսի նման
Խառն 'ի խուռն միմեանց ետեւ:
Ժամ հրաժեշտի, ժամ տխուրեան
Նրանց չէ վիշտ ոչ բերկրանք,
Ապագայում չիք ցանկութիւն,

285965-62

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐ
Гос. Библ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ
Ա. Մ. Մաշտոցի անվան

Ո՛չ անցեալումը ափսոսանք:
Դժբաղդութեան տխուր օրը
Միմիայն նրանց մտաբերիր։
Լեր անտարբեր առ երկրաւորը
Նրանց նման անհոգ եղիր:
Իսկոյն երբ գիշերը իւր մութ թեւերով
Կովկասի գլխին հովանի ձգէ,
Իսկոյն երբ աշխարհը դիւթական խօսքով
Կախարդուածի պէս յանկարծուս լռէ,
Իսկոյն երբ հովիկը ժայռերի վերա
Թառամած խոտը թեթեւիկ շարժէ
Եւ փոքրիկ թռչնիկ թագնուած մէջ նրա
Մութի մէջ ուրախ ոսայ ու թռչէ,
Եւ երկնի ցողը ագահ կլլելով
Խաղողի որթի ներքեւում բացուի
Գիշերի ծաղիկն աննման գեղով,
Իսկոյն երբ լուսնեակը դիմօք ոսկի
Լեռան ետեւից կամաց բարձրանայ
Եւ գաղտնի հայեացք ձգէ քեզ վերայ,—
Ցայնժամ դէպի քեզ ես թռչեմ պիտի
Մինչեւ արշալոյս հիւրասիրուելու
Եւ արտեւանանց քո հրաշալի
Ոսկեգօծ, սիրուն երազներ տալու ..»

XVI.

Ձայները լռեցին.... Այստեղ հեռուում
Հնչիւնից յետոյ բեկբեկուեց հնչիւն...
Թամարը ցատկելով իւր շուրջն է նայում...:
Անբացատրելի մի շփոթութիւն

Իւր սիրտն է յուզում. երկիւղ, տխրութիւն,
Անբաւ զմայլումը—ոչինչ բաներ են.
Բոլոր զգացմունք յանկարծ եռացին:
Իւր շղթաները քակում էր հոգին,
Նրա երակներում կրակ էր հոսում.
Եւ նրան թւում էր—Դեռ ես է հնչում
Այն ձայնը գաղտնի, նոր եւ հրաշալի:
Առաւօտեան դէմ քունը ցանկալի
Հուսկ գոցեց նրա յոգնած աչկունքը.
Սակայն այդ քունը խառնեց նրա միտքը
Մարգարէական մի խորթ անուրջով.—
Ամպազգեաց մնջիկ մի ոմն եկուոր,
Մի չնաշխարհիկ գեղով փայլելով,
Խոնարհուել էր նրա գլխիկոյս մահճին.
Եւ նրա հայեացքը այնպէս մի սիրով,
Ա՜յնպէս տրտմութեամբ նայում էր կուսին,
Որ կարծես թէ նա խղճում էր նրան:
Դա չէր երկնաւոր հրեշտակը պահապան.—
Երփներանգ շողից պսակ փայլիլուն
Իւր գանգուր մազեր չէր պճնազարդում.
Նա չէր դժոխքի սոսկալի ոգին,
Թշուառ նահատակը—ոչ ամենեին:
Նա նմանում էր պարզ երեկոյին—
Ոչ տիւ, ոչ գիշեր, ոչ մութ, ոչ լուսին....:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

I.

«Հա՛յր իմ, հա՛յր իմ, թող քո սպառնալիքներ,
Եւ քո Թամարիդ մի՛ յանդիմաներ:
Ես արտասվում եմ։ Այս լացը տեսնում ես...
Եւ այս արտասուք առաջինը չեն...:
Ի զուր փեսաներ խմբով գալիս են
Հեռու տեղերից դեպի մեր կողմեր...
Իսկ ես ո՛չ ոքի կին պիտ չը լինիմ...:
Մի՛ մեղադրեր դու ինձ, ո՜ հայր իմ.
Դու ինքդ ես տեսել—ինչպես օր քան զօր
Ես թառամում եմ, զոհ լափող թոյնի.
Ներգամիտ ոգին անուրջքով հզօր
Տանջում կեղեքում է իմ սիրտն ու հոգի.
Ես կորչո՜ւմ եմ հայր, վրաս խղճացիր
Ու անմիտ աղջկանդ կուսանոց դրկիր.—
Անդ ինձ կըլինի Փրկիչը պաշտպան,
Նորա առաջ ես վիշտերս կըլամ:
Աշխարհումս չկայ էլ ինձ խնդութիւն...
Թող վաղորոք ինձ խուցի մթութիւն
Խաղաղ արբութեամբը հովանաւորէ
Եւ ինչպես դագաղ իւր գիրկը առնէ:

II.

Եւ նրա ծնողքը տարին նրան
Մի վանք մենաւոր. ու կոշտ խարազով
Ծածկեցին նորա կուրծքը կուսական:
Բայց միանձնուհու անգամ հագուստով,
Ինչպես երբ շքեղ կերպաս էր ծածկած,
Սիրտն էր բաբախում ինչպես եւ առաջ,
Միշտ մեղսագրգիռ անուրջքով լցուած:
Սեղանի հանդէպ, լուսով մոմերի,
Եւ հանդիսաւոր երգի ժամանակ,
Աղօթքների մէջ—նրան էր լսելի
Ծանօթ խօսքերի ձայն քաղցրանուագ:
Եւ մութ տաճարի կամարների տակ
Մերթ ընդ մերթ ծանօթ դէմքը սահելով,
Անցնում էր անձայն, անհետ եւ արագ.
Կնդրկի թեթեւ ամպում փայլելով,
Ինչպես մի աստղ՝ հանդարտ եւ տխուր
Նշան էր տալիս, կանչում... բայց դեպ ո՞ւր...:

III.

Երկու բլրի մէջ մի տեղ հովասուն
Թագնուած էր այն սուրբ վանքը մենաւոր:
Զինար կաղամախ կարգերով սիրուն
Պար էին բռնել նրա շուրջը բոլոր:
Եւ մերթ՝ երբ գիշերը երկրին էր պատում,
Ծառերի միջից խուցի լուսամտում
Նորընծայ կուսի կանթեղն էր փայլում:
Շուրջը՝ նշենի ծառերի տակին,

Ուր կարգ կարգ կանգնած են տխուր խաչեր,
Շիրիմների այդ լուռ պահապաններ—
Թռչնիկներ միմեանց երգակցում էին:
Եւ ժայռից դէպի ժայռ ուրախ ոստչելով,
Վնիս վտակները ցուրտ ալիքներով
Ու թեռուած ժայռի տակ միանալով,
Կիրճում խառնուելով բոլորը միասին,
Ծաղիկի ցողով ծածկուած թուփերը
Կամաց բերելով գլորվում էին:

IV.

Հիւսիսում սարեր էին երեւում:
Այդն վարդամաս երբ նոր է փայլում,
Երբ որ կապտագոյն ծուխը ներքեւում,
Հովիտի խորքում պտոյտ է անում,
Եւ դէպ արեւելք դէմքերը ուղղած
Միւէզիններն են աղօթքի կանչում.
Երբ ինչուն զանգի ձայնն է զօղանջում
Բոլոր մենաստանը զարթեցընում—
Այն հանդիսաւոր եւ խաղաղ ժամին.
Երբ մատաղահաս, սիրուն վիրուհին
Գնում է ջրի, երկայն կուժ ձեռին
Քարոտն իջնելով զառիվայր սարին,
Ցայնժամ ձիւնապատ գագաթից շղթան
Բաց-կապոյտ գոյնի պարսպի նման
Պարզ երկնի վերա էր գծագրվում:
Իսկ այդ գագաթներ արեւը մտնելուն
Ըզգենում էին հանդերձ ծիրանի.
Եւ նրանց մէջը պատռելով ամպեր

Բարձր 'ի գլուխ զերբ արքայ զօրեղ
Կանգնած էր Կազբէկ, հսկան Կովկասի,
Գլուխը չալմապատ, զգեստը կերպասի:

V.

Սակայն յանցաւոր զգացմամբ լցուած
Թամարի սրտին անմատոյց էին
Մարդու զգացմունք: Եւ նորա համար
Բոլոր աշխարհը սեւ ունէր հագած
Ու ամեն ինչ նրա մէջ տանջանքի պատճառ—
Եւ շողը այգի եւ մրան խաւար:
Պատահում էր՝ երբ բնած գիշերին
Քաղցրիկ զովութիւնը պատում էր երկրին,
Սուրբ Աստուածամօր հանդէպ պատկերին
Ընկնում էր Թամար եւ արտասվում էր.
Եւ խոր լռութեան մէջ գիշերային
Նորա հեծեծանքը կողկողագին
Միտքն էր խռովում հանապարհորդին,
Որ մտածում էր «Դա հեծեծում է
Լեռնային քաջը, այրումը շղթայած»:
Եւ բոլոր մարմնով լսելիք դարձած
Ուժասպառ նժոյգն է յառաջ վարում...:

VI.

Թամարը յանախ՝ համակուած վշտով
Նստած լուսամտում, մտքերը 'ի տար
Նայում էր հեռուն ժրաջան աչքով
Եւ ամբողջ օրը տխուր, անբարբառ
Նա սպասում է... „անշուշտ նա կը գայ“

Շշնջում է նրան մի ինչ որ ձայնիկ:
Երազներ 'ի զուր չեն շոյել նորան,
Աչքերով տխուր, խոսքերով փափկիկ,
Զուր չէ նա նրան երեւցել այնքան։
Արդեն շաս օրեր է տանջվում Թամար
Ինքն էլ չգիտէ թէ ինչո՞ւ համար.
Նա սուրբերին է աղօթել ուզում,
Սակայն իւր սիրտը նրան է աղօթում.
Եւ ամենօրեայ պայքարով վաստակ
Երբ դէպի մանին նինջը է կանչում –
Այրում է նրան բարձր գլխի տակ.
Նա խեղդվում է, սարսափ է զգում,
Տեղիցը ցատկում է, մարմինը դողդոջուն,
Կուրծքը բունդ'իբունդ, հրատապ ուսերը,
Չէ կարող շնչել, մթնում են աչքերը,
Նրա գիրկն ագահ գիրկ է որոնում,
Շուրթերի վերան համբոյրն է հալչում:..

. . . . . .

. . . . . .

VII.

Մթան շամանդաղ շղարշով օդային
Վրաց աշխարհի լեռներն էր ծածկել:
Գիրգ սովորութեան հնազանդ ձայնին
Դէպի մենաստան Դեւրն էր թռել:
Բայց երկար, երկար նա չէր ժպրնում
Խաղաղ անկիւնի սրբութիւնը խախտել.
Լինում էր ոռպէ, երբ կարծես թէ նա
Զարմից փափագը պատրաստ է թողնել:

Բարձր պատի տակ է մտախոհ յածում
Եւ նրա քայլերից այնտեղ ստուերում
Առանց քամի՝ տերեւն է դողում:
Նա իւր հայեացքը ձգեց դէպի վեր.
Կուսի պատուհանը լուսաւորված էր
Կանթեղի լուսով, նա սպասում էր
Ինչ որ մի անձի, վաղուց, անհամբեր:
Եւ անա տիրող խոր լռութեան մէջ
Սազի կսրնտոց եւ երգի ձայներ
Սկսան հնչել. եւ այդ հնչիւններ
Ինչպէս արտասուք թափվում են առաս,
Միմեանց հետից արագ անընդհատ:
Իսկ այդ երգ չէնաղ այնպէս քնքոյշ էր,
Որ կարծես թէ նա մեր երկրի համար,
Վերը, երկնքում յորինուած լինէր:
Մոռցված ընկերին տեսնել կամեցող
Մի հրեշտակ չէ՞ր սա, որ գաղտնի, թաքուն
Թռչելով այստեղ գեղգեղեց սիրուն
Անցած գնացած օրերի մասին,
Նորա տանջանքի ամոքման համար...:
Սիրոյ տագնապը, նորա այլայլումը
Դեւը հասկացաւ առաջի անգամ...
Նա երկիւղի մէջ խոյս տալ է ուզում,
Բայց նորա թեւը տեղից չ'է շարժվում.
Եւ ո՞ հրաշք—նորա աչքերից տխուր՝
Գլորվում է մի ծանր արտասր...
Մինչեւ մեր օրեր այնտեղ խուցի տակ
Ընկած կայ մի քար թափանցանց այրված
Մի տաք արտասրով, տա՜ք ինչպէս կրակ,

Մի գերմարդկային ուրիշ արտաքին...:

VIII.

Եւ մտնում է նա սիրելու պատրաստ
Բարութեան համար սիրտը բաց արած.
Եւ մտածում է—հասել է արդեն
Մի նորոգ կեանքի ցանկալի ոստին:
Մութ անյայտութեան անվերջ երկիւղը
Եւ սպասելու անորոշ դողը,
Կարծես առաջին այն տեսակցութեան
Նորա հպարտ հոգուն հետ ծանօթացան:
Այս հանգամանքը չար էր զուշակում...
Նա ներս է մտնում, նայում է տեսնում
Առջեւը բերովբէն առաքեալը դրախտին,
Պահպան հրեշտակը մեզսագործ կուսին,
Կանգնած է այնտեղ, դէմքը աննման,
Ծպիտը մաքուր եւ թեւատարած
Հովանաւորել է թշնամուց նրան...
Եւ նառագայթը արքազան լուսին
Կուրացրեց անսուրբ հայեացքը յանկարծ.
Իսկ փոխան քաղցր բարեւի ձայնին
Հնչեցաւ մի խիստ, ծանր նախատինք:—

IX.

«Ոգի՛ անհանգիստ, մեղսապարտ ոգի՛,
Քեզ ո՞վ է կանչել այս կեա-գիշերին.
Քեզ երկրպագուք այս կողմերը չկան,
Զարը չ'է շնչել այստեղ ո՛չ մի գամ.
Դեպ իմ արքուրիւն եւ դեպի իմ սեր

Պահպան հրեշտակը մեղսագործ կուսին,
Կանգնած է այնտեղ, դէմքը աննման,
Ծպիտը մաքուր եւ թեւատարած
Հովանաւորել է թշնամուց նրան...

Զարագործ դու հեռֆ բանալ մի՛ ճգնիր.
Քեզ ո՞վ է կանչել».
Ի պատասխանի
Զարուքեան ոգին նենգուքեամբ ժպտաց
Եւ չար նախանձով փայլակեց հայեացք.
Եւ նորա հոգում վառուեցաւ կրկին
Բուռն ատելուքեան կրակը վաղեմի:
«Նա ի՛մս է, ասաց նա գոռոզաբար,
Թող տուր դու նրան, գիտցիր նա իմս է.
Ուշացել ես դու խղճուկ պատշգան
Եւ չես դատաւոր ինձ կամ թէ նորան.
Մեծմտուքեամբ լի սրտին կուսական
Ես դրել եմ իմ կնիք սեպհական.
Այստեղ էլ չ'ունես դու քո սրբութիւնը
Աստ ես եմ իշխում եւ ես եմ սիրում»:

Եւ հրեշտակը տրտում աչքերով
Խղճալի զոհի ակնարկեց վերան
Եւ ճախր անելով կամաց՝ թեւերով,
Երկնի երերում նա անհետ եղաւ...

. . . . . .

X.

ԹԱՄԱՐ.

Օ, ասա, ո՞վ ես: Խօսիդ է սոսկալի՜.
Դժո՞խքն է քեզ ղրկել թէ արքայութիւնը,
Դու ի՞նչ ես ուզում:

ԴԵՒԼ.

Գեղեցի՜կ ես դու:

ԹԱՄԱՐ

Բայց ո՞վ ես դու, ո՞վ... տ՛ւր պատասխանի

ԴԵՒԼ.

Ես նա եմ, որին ունկնդիր էիր
Դու գիշերային խաղաղիկ պահուն,
Որի միտքը քո շշնջում էր հոգուն,
Որի վիշտը մի քիչ զուշակում էիր,
Որի պատկերը երազումդ տեսնում.
Ես նա եմ, որի հայեացք խորտակիչ
Նոր բողբոջ ձգող յոյսն է աւերում.
Ես նա եմ, որին ո՛չ ոք չէ սիրում,
Բայց բոլոր աշխարհը անիծում է միշտ:
Տարածութիւն եւ տարիներ երկար,
Ոչինչ բաներ են բոլորն ինձ համար.
Ես եմ հողեղէն սրկացս աղէտ,
Ես տէր գիտութեան եւ ազատութեան,
Ես երկնի ատող, ես չարիք բնութեան
Եւ դու տեսնու՞մ ես—ծնկաչոգ քեզ մօտ։
Քեզի եմ բերել զորովեալ սրտով
Քաղցր պաղատանք երանդուն սիրոյ,
Առաջին տանջանքը աշխարհային
Նոյնպէս արտասուք իմ այս առաջին:
Օ՜, լսի՛ր դու ինձ կարեկից սրտով.
Ինձ դէպի բարին, դէպ երկնի ճանպան
Կրդարձնէիր մի հատիկ խօսքով.
Սիրուդ անարատ հագած պատմուճան
Այնտեղ երեւել ես կրկարէնայի

Ինչպէս նոր հրեշտակ, նոր փայլով դէմքի:
Օ՜, միմիայն լսիր, քեզ աղաչում եմ,
Քո սրտունկն եմ ես, ես քեզ սիրում եմ:
Իսկոյն երբ ես քեզ միանգամ տեսի,
Իմ անմահութիւնս եւ իշխանութիւնս
Գաղտնի, սրտիս մէջ, յանկարծ ատեցի:
Իմ մէջ ակամայ շարժվեց մի նախանձ
Դէպի վաղանցուկ վիճակ մահացուաց.
Ձ'ապրել ինչպէս դու, ցաւ էր ինձ համար,
Իսկ ապրել բաժան—տանջանք չարաչար:
Սառած սրտիս մէջ շող անակընկալ
Սկսաւ ջերմուլ եւ կենդանանալ,
Եւ հին վէրքերի տակ թագնուած իմ վիշտ
Շարժուել սկսաւ զերթ օձ ամբարիշտ:
Առանց քեզ՝ առ ի՞նչ այս անմահութիւն,
Իմ իշխանութեանս անսահմանութիւն.
Խօսքեր են միայն դատարկ եւ հնչիւն,
Ընդարձակ տանար առանց դիցուհու:

ԹԱՄԱՐ

Թող ինձ, ո՛ ոգի, նենգաւոր ոգի,
Լսի՛ր, թշնամուն ես չեմ հաւատում:
Ասուա՞ծ իմ... աւա՞ղ ես չեմ կարենում
Այլ եւս աղօթել .. թոյնով մահաբեր
Իմ տկարացող միտքն է տոգորուած:
Լսի՛ր, տեսնում եմ—ինձ պիտ սպանես.
Քո բոլոր խօսքեր կրակ են եւ թոյն...
Ասա՛, դու ինձի ինչո՞ւ ես սիրում:

Դ Ե Ի Ը.

Ինչու՞, գեղունիս: Աւա՜ղ չը գիտեմ.
Ես մի նոր կեանքով այժմ ծնչում եմ,
Զարագործ գլխիցս հպարս կորզեցի
Ես փշեայ պսակ, անցեալը մոռացի.
Իմ դրախտ, իմ դժոխք աչքերիդ մէջ են:
Սիրում եմ ես քեզ ոչ ասի սիրով,
Ինչպէս դու սիրել երբէք չ'ես կարող.—
Անմահ մտածման, անմահ անուրջի
Բոլոր զմայլմամբ, բոլոր բռիչքով:
Աշխարհի սկզբից իմ հոգուս խորքում
Դրոշմված է եղել քո նաշխուն պատկեր
Աչքերիս առաջ նա բարձրանում էր
Յաւիտենական երերի ծովում:
Վաղուց խառվելով իմ միտքն ու հոգին
Քաղցրիկ քո անուն ականջս էր գգվում.
Դրախտում քաշած ուրախ օրերին
Դուն էիր պակաս ինձ համար միայն:
Օ՜, քէ իմանայիր դու գէթ մի անգամ
Որչա՜փ դառնագին վիշտ է եւ տանջանք
Բոլոր կեանքիդ մէջ, դարեր անբաժան,
Եւ զուարճանալ եւ անվերջ տանջուել,
Զարուքեան համար զովեստ չ'սպասել
Եւ ոչ բարուքեան—վարձատրութիւն,
Ապրել իւր համար, տխրել իրենով,
Եւ այս անսպառ, անվերջ պայքարով,
Առա՜նց յաղթանակ, առանց հաշտութիւն:
Ոչ, ոչ, մի'շտ ափսոսալ, բնաւ չցանկալ,
Ամենը իմանալ, բոլորը զգալ,

Ամեն բան տեսնել եւ զուր, ակամայ
Ամեն բան ասել ու երկրի վերայ
Ոչինչ չը թողնել ու արհամարհել....

Իսկոյն երբ անհծքը Աստուածային
Կատարած առաւ, նոյն իսկ այն օրին
Կրակոտ գրկանքը բոլոր բընութեան
Սառին ինձ համար միշտ եւ յաւիտեան...:
Կապոյտ տարածքը առջեւս ընկած էր,
Վաղ ժամանակից ծանօթ լոյսերի
Ես հարսանեկան պանուճանքը տեսի...
Ոսկի թագերով՝ նրանք հոսում էին.
Եւ ի՜նչ ես կարծում.—նախկին ընկերին
Զուզեց ճանաչել ո՛չ ոք նրանցից.
Վտարեալներին ինձ յար եւ նման
Կանչել սկսայ յուսահատումից,
Բայց չճանաչեցի ես ինքս անգամ
Նրանց դէմք, խօսքեր եւ չար հայեացքներ:
Եւ երկիւղի մէջ թափ տալով թեւերս
Ճախրեցի... բայց ու՞ր, բայց ինչո՞ւ համար.
Այդ ես չը գիտեմ: Նախկին ընկերներս
Ինձ համարեցին. ինչպէս եւ եղեմ,
Աշխարհս էլ ինձ համար խուլ ու համր դարձաւ
Այսպէս է ծփում վտանգված նաւակ՝
Զունեցող ո՛չ ղեկ եւ ո՛չ առագաստ,
Առանց մի կէտի, առանց մի նպատակ
Խաղալիք եղած ծովին բարկասաստ.
Այսպէս առաւօտը արեւածագին
Ամպրոպայոյզ մի ամպի կտոր

Արտաւորելով երկնի կապուտակ,
Միայնակ, մի տեղ կանգնել չ'իշխելով,
Թռչում է անհեռ եւ աննպատակ
Աստուա՜ծ ո՛չ գիտէ, ուրտեղից դէպ ուր:—

Ես էլ մարդկային բաղդն ու վիճակ
Կարգադրում էի ո՛չ շատ ժամանակ.
Մեղմերի նրանց սովրեցնում էի,
Ամեն ազնիւ բան անարգում էի
Եւ գեղեցիկը հայհոյում էի,
Բայց ո՛չ ընդ երկար...: Մաքուր հաւատի
Բոցը նորանցով ընդ միշտ մարեցի...:
Եւ իմ ջանքերիս արժանի՞ էին
Միմիայն յիմարներ եւ կեղծաւորներ:
Եւ պահուեցի ես սարի կիրճերում,
Եւ թափառեցի գերբ օդերեւոյթ
Մթութեանը մէջ գիշերի խորին...:
Պատահում էր որ նանպորդը միայնակ,
Մօտիկ կրակով խաբուած թռչելով
Եւ ձիով հանդերձ գահավիժուելով
Խոր անդունդի մէջ, 'ի զուր էր կանչում
Եւ մի արիւնոտ հեսք էր գալարվում
Նորա ետեւից՝ զառվայրին վերա...:
Սակայն չարութեան զբօսանք մոայլ
Զգբաղեցրին ինձ ժամանակ երկար:
Ամենի մերկի հետ երբ 'ի պայքար,
Քա՜նի օր, քա՜նի, փոշին խառնելով,
Ամպ ու կայծակից հագուստ զգեցած
Երերում թռչում էի արընթաց,

Որպէս զի տարերց աղմկեալ խմբում
Սրտիս բրմնջիւնը կարենամ խեղդել,
Անխուսափելի մտքերից խոյս տալ
Անմոռանալին իսպառ մոռանալ:
Մարդկան ամբոխի դառնագին զրկանք,
Անցեալ, ապառնի սերընդոց տանջանք,
Նրանց նեղութիւն եւ թշուառութիւն,
Ի՞նչ արժէք ունին իմ տանջանքների
Մի ոսպի մօտ: Եւ ի՞նչ են մարդիկ,
Ի՞նչ բան է նրանց կեանքն ու աշխատանք:
Նրանք անցել են, նրանք կ'անցնին.
Նրանք յոյս ունին—արդար դատաստանը.
Կարող է նա նրերել, թէպէտ կ'մեղադրէ:
Բայց իմ տրտմութիւնը միշտ կայ անփոփոխ
Եւ նրան, ինչպէս ինձ՝ վերջ պիտ չլինի.
Եւ գերեզմանի մէջ նա չի՜ ննջիլ:
Նա, այդ տրտմութիւնը, երբեմն ինչպէս օձ
Փաղաքշել գիտէ, երբեմն կ'այրէ,
Երբեմն կ'փայլէ ինչպէս կրակի բոց,
Քարի պէս երբեմն միտքս կը ճնշէ—
Կորած յոյսերի, հանգած կիրքերի
Անխորտակելի՜ նա մաւսոլիոն:

ԹԱՄԱՐ

Ինչո՞ւ պիտի ես գիտնամ քո վշտեր,
Ինչո՞ւ ես այդպէս դու ինձ գանգատվում.
Դու մեղք ես գործել...

ԴԵՐ

Քո դէ՞մ ես ասում.

ԹԱՄԱՐ

Կարող են մեզ լսել...

ԴԵՒԼ

Բայց մենք մենակ ենք:

ԹԱՄԱՐ

Սակայն Աստուա՞ծ.

ԴԵՒԼ

Նա մեզ չի նայիլ,
Նա զբաղուած է երկնով, ո՛չ երկրով:

ԹԱՄԱՐ

Սակայն պատիժը, դժոխքի տանջանքը.

ԴԵՒԼ

Ի՞նչ անենք: Այնտեղ ինձ հետ կ'լինես:

ԹԱՄԱՐ

Ով կ'ուզես լինես, բարեկամ իմ նոր,
Հանգստութիւնս խպառ կորցնելով,
Ես յակամայից՝ զաղտնի հանոյքով,
Թշուառ նահատակ, քեզի լսում եմ:
Բայց թէ քո խօսքեր լինեն նենգաւոր,
Բայց թէ պատրանքը դու բագրնելով...
Օ՜, աղաչում եմ... ինչպիսի՜ անուն...
Քեզ ինչուդ է պէտք, ասա, իմ հոգին,
Մի՞թէ երկնքին եմ ես բանկագին

Աւելի քան նրանք, որոնց չ'ես տեսել:
Նրանք էլ, աւա՜ղ, շատ գեղեցիկ են.
Ինչպես ասս, նրանց կուսական մանկին
Մանկանացուի ձեռք դեռ չէ դպել...:
Ո՛չ. սոսկալի դու ինձ արա երդում...
Ասա՛, տեսնում է՞ս, հոգիս է մաշվում,
Կնոջ ցնորքներ դու լաւ ես տեսնում.
Ակամայ երկիւղ դու զարթեցնում ես...
Բայց դու հասկացար, բոլորը գիտես
Եւ պիտի խղճաս անպատճառ դու ինձ:
Երդուիր հիմա... չար միտումներից
Ուխտ դիր դու այժմ հրաժարուել.
Բայց անհակտելի երդում, խոստումներ,
Մի՞թէ բնաւին չես կարող գտնել...:

ԴԵՒԼ

Երդվում եմ ստեղծման առաջին օրով,
Երդվում եմ նրա եւ վերջին օրերով,
Երդվում եմ ոնիրի ամօրի գնով
Եւ արդարութեան սուրբ յաղթանակով.
Երդվում եմ վշտագին ցաւովը անկման
Վաղանցուկ ցնորքով քաղցրիկ յաղթութեան,
Երդվում եմ քեզ հետ տեսակցութիւնովը
Եւ սպառնացող հրաժեշտովը.
Երդվում եմ հոյլով ես ոգիների
Եւ ինձ հպատակ եղբարցս վիճակով,
Անաչառ սրովը հրեշտակների,
Իմ զգաս, անհաշտ թշնամիների.
Երդվում եմ երկնով նոյնպես դժոխքով,

Երկրի սրբութեամբ, նոյնպես քո գլխով.
Երդվում եմ ես քո վերջին հայեացքով,
Երդվում եմ առաջին քո արտասուքով,
Քո անչափաչար շուրթերիդ շնչով
Եւ գանգուրներիդ մեսամ կոճակով
Երդվում եմ տանջանքով եւ երանութեամբ,
Երդվում եմ սիրոյս բոլոր զգացմամբ.—
Հրաժարուած եմ ես հին վրէժից,
Հրաժարուած եմ զոռոզ մտքերից.
Այժմեն բոյնը՝ նենգ շողոքորթութեան
Ոչ ոքի միտքը էլ չի պղտորել.
Ես փափագում եմ երկնի հեռ հաշտուել,
Ուզում եմ սիրել, ուզում եմ աղօթել
Ուզում եմ նոյնպես հաւատալ բարոյն.
Ապաշաւանքի կ'ջնջեմ արտասրով
Ես իմ երեսից քեզ արժանաւոր
Երկնի կրակի հետքերը բոլոր.
Եւ աշխարհը թող անվրդով, հանգիստ
Ծլէ ու ծաղկէ, սակայն առանց ինձ:
Օ՜, հաւատա՛ ինձ, ցայսօր ես միայն
Քեզի հասկացայ ու գնահատեցի
Եւ քեզ ընտրելով ինձ վեմ արբութեան
Իմ իշխանութիւնս ոտիդ տակ դրի:
Քո սիրոյդ անա սպասում եմ ես,
Ինչպես երկնային մի ողորմութեան
Եւ մի վայրկենիդ համար կսամ քեզ
Ես յաւիտենիք. հաւատա՛, Թամար,
Ինչպես սիրոյ մէջ, նոյնպես չարիքի
Ես անփոփոխ եմ, մեծ եւ անսասան:

Անվերջ երերի ես ազատ որդի
Կ'առնեմ քեզ դէպի ասեղաց աշխարհ
Եւ դու կըլինիս երկրի թագուհի
Առաջին դու իմ բարեկամուհի.
Առանց խղճալու եւ կարեկցելու
Դէպի աշխարհը կըսկսես նայել,
Ուր չէ նշմարիս ոչ երջանկութիւնը,
Ոչ երկարատեւ է գեղեցկութիւնը.
Ուր բուն են դրել ոնիր պատիժներ,
Ուրտեղ ապրում են լոկ չնչին կիրքեր.
Ուր առանց վախի չեն կարող ատել,
Առանց երկիւղի չեն կարող սիրել,
Կամ թէ չըգիտես արդեօք ի՞նչ բան է
Բոպեական սէրը մարդկային—
Դեռահաս արեան մի ալեկոծում.—
Անցնում են օրեր, սառչում է արիւն:
Ո՞վ կը դիմանայ սիրոյ հրաժեշտին,
Նոր գեղեցկութեան հրապուրանքին,
Ընդդէմ ձանձրութեան, ընդդէմ թախիծին
Եւ ցնորքների քմահաճ բռիչքին:
Չէ՛, ոչ թէ քեզ իմ բարեկամուհուն,
Գիտցիր, վիճակուած է բնութիւնից
Լռիկ թառամել մի նեղ շրջանում
Իբր ստրկուհի նախանձի կոպիտ,
Ապրել փոքրոգի սառն մարդկանց հետ
Կեղծ բարեկամաց եւ վատ թշնամեաց
Զուր երկիւղի մէջ, յուսոյ ապարդիւն,
Դատարկ ու ծանր հոգսերով բեռնված:
Բարձր պատերով պարփակուած՝ տրտում,

Աղօթքների մէջ, նոյն չափով հեռուն
Ինչպէս Աստուծուց, նոյնպէս մարդկանցից,
Առանց կիրքերի դու պիտ չ'հանգչես:
Օ՜, չէ, իմ սիրուն, չքնաղ արարած,
Քեզի մի ուրիշ բաղդ է վիճակուած.
Քեզ սպասում է մի ուրիշ տանջանք,
Ուրիշ զմայլման յորդառատ կոնակ:
Օն, թող ուրեմն նախնի վ ափագներդ
Եւ աշխարհս եղկելի իւր նանպով գնայ.—
Նրանց փոխարէն հպարտ գիտուքեան
Անդունդը խորին քեզի կըբանամ:
Եւ ոգիների ինձ սպասաւոր
Հոյլեր կբերեմ դէպ քո գարշապար.
Ամպազգեաց, թեթեւ սպասուհիներ
Սիրուն գեղունի, քեզի ես կը տամ,
Եւ արեւելքի աստղից գեղեցիկ
Կրկորգեմ քեզի ոսկեկուռ բազիկ,
Ու գիշերային ցողերը ծաղկան
Կ'առնեմ կրնանեմ ես նորա վերան:
Իսկ երեկոյի շողվն արփենի
Քո մէջքիդ շեղ կրկապեմ գօտի.
Անուշիկ հոտեր եւ մաքուր բուրումն
Ես կրտարածեմ շրջակայ օդում.
Ամեն մի ոսկէ հրաշալի երգով
Քո լեռիքդ ես կը փայփայեմ.
Սաթից, յակինթից փայլուն ճանանչով
Հարուստ պալատներ քեզի կ'կանգնեմ:
Կրխորասուզվեմ մինչ ծովի յատակ,
Կը թռչեմ մինչեւ երկնի կապուտակ

Եւ նա մեղմաբար, կրակոտ շուրթերով
Կուսի դողդոջուն շրթանցը հպեցաւ.
Գայթակղութեամբ լի թովիչ խօսքերով
Նրա աղաչանաց պատասխան տուաւ

Եւ կրբերեմ քեզ բոլորը, ամեն բան
Ինչ երկրային է—սիրիր ինձ միայն...

XI.

Եւ նա մեղմաբար, կրակոտ շուրթերով
Կուսի դողդոջուն շրթանցը հպեցաւ.
Գայթակղութեամբ լի թովիչ խօսքերով
Նրա աղաչանաց պատասխան տուաւ:
Կարող հայեացքը նայում էր կուսի
Աչքերի մէջը. նա նրան այրում էր.
Մութ գիշերի մէջ նա կայծակում էր
Անհեղիտալի իբրեւ թէ սուսեր:
Աւա՜ղ, չար ոգին յաղթանակում էր:
Մահառիթ թոյնը նրա համբուրի
Իսկոյն թափանցեց սիրտն կուսական
Եւ մի աղաղակ տանջող, սոսկալի
Աղմկեց խորին լռութիւնը մթան...
Այդ ձայնի մէջ կար եւ սեր եւ տանջանք,
Նախատինք, նոյնպէս վերջին աղաչանք,
Ու անյոյս հրաժեշտ, հրաժեշտ վերջին,
Իւր երիտասարդ մանուկ հասակին...:

. . . . . .

XII.

Մի եւ նոյն ժամին գիշերապանը
Աւուրեայ տախտակ ունելով ձեռին,
Հանդարտ անցնելով սահմանեալ ճանպան
Քայլում էր մենակ շուրջը ծուռ պատին:
Եւ մատաղ կուսի խուցից ոչ հեռուն

Նա իւր համաչափ քայլը մեղմացրեց,
Եւ խռովեալ հոգւով իւր ձեռքը իսկոյն
Աղուրեայ տախտակի երեսին դրեց.
Եւ շուրջանակի լռութիւնը բափանցանց
Կարծես թէ նրա ականջին հասաւ
Երկու շուրթերի համբոյր համաձայն,
Մի գոչիւն յանկարծ եւ թոյլ հեծեծումը...
Եւ կասկած անսուրբ բափանցեց իսկոյն
Պահպան ծերունու սիրտը փորձառու...
Բայց մի ակնթարթ անցնելուց յետոյ
Ամեն բան լռեց: Կողմերից հեռու
Հողմիկի շնչիւն եւ տերեւների
Մեղմիկ սօսաւիւն էին լսելի,
Եւ մութ ափերի հետ շշնջում էր
Ջինջ, ականակիտ վտակը սարի:
Աստուածահաճոյ սուրբ մարդկանց աղօթքը
Նա երկիւղի մէջ կարդալ շտապեց,
Որպէսզի այնու չար ոգու խաբէը
Հեռացնէ իւր մեղաւոր մտքից.
Խաչակնքում է դողուն մատերով
Նա իւր երկիւղած, վրդովեալ կուրծքը
Եւ լռիկ մնջիկ շտապ քայլերով
Նա շարունակում է իւր նանպան սովոր...

. . . . . .

XIII.

Ինչպէս քուն մտած պարիկ աննման,
Նա դագաղի մեջ էր հանգիստ պառկած,
Սպիտակ եւ մաքուր էր ձիւնի նման
Նորա երեսի գոյնը նուաղած։

Ինչպէս քուն մտած պարեկ աննման,
Նա դագաղի մէջ էր հանգիստ պառկած,
Սպիտակ և մաքուր էր ձիւնի նման
Նորա երեսի գոյնը նուաղած։

Արտեւանունքն են փակված յաւիտեան...:
Սակայն, Աստուա՜ծ իմ, ո՞վ չէր ասիլ թէ
Հայեացք նրանց տակ ննջում էր միայն,
Որ սպասում է կամ մի համբուրի,
Կամ արշալուսին շքեղ հրաշալի:
Բայց, աւա՜ղ, 'ի զուր էր այգուն շողը
Շոյշոյում նրանց ոսկի հոսանքով,
'Ի զուր շրթունքները ծնողաց սիրող
Համբուրում նրանց համակեալ վշտով,...
Ոչ, մահուան կնիքը յաւիտենական
Չէ կարող փակել եւ աշխարհ համայն:

XIV.

Ուրախ օրերին եւ ոչ մի անգամ
Սիրուն Թամարի զգեստը տօնի
Երբէք չէ եղել այս տեսակ փարթամ,
Այսպէս գոյնզգոյն, այսպէս գեղանի.—
Հայրենի կիրճից քաղած ծաղիկներ,
(Այսպէս վաղեմի ծեսն է պահանջում)
Տալիս են նորան իրենց բուրմունքներ,
Նրա ձեռքը մեռեալ—նրանց է սեղմում.
Կարծես դորանով հրաժեշտ վերջին
Տալիս են նրանք վաղանցուկ երկրին:
Եւ ոչ մի բանը նրա երեսին
Կարծել չէր տալիս, որ նա մեռել էր
Կրից եւ զմայլման տաք ոգեին:
Իսկ նորա դեմքի բովանդակ գծեր
Լցուած էին նոյն գեղեցկութեամբ
Ինչպէս մարմարիոնը. առանց զգացման,

Ջուրկ խելքից, առանց արտայայտութեան
Եւ խորհրդաւոր ինչպէս մահն ինքնին:
Մի արտասովոր ժպիտ սառել էր
Խաղալով նորա շուրթերին վերան
Եւ շատ տխրալի պատմում էր բաներ
Ուշադիր, զննող աչքերին մարդկան:
Այդ ժպտի մէջ կար սառն արհամարհանք
Դեռահաս հոգու, բռնելու պատրաստ,
Այտայայտութիւն վերջին մտածման
Եւ երկրիս՝ անձայն մի բարեաւ մնաս.
Անցկացած կեանքի մի զուր առկայծումը,
Որով աւելի էր նա մեռած բուռ,
Ցաւիտեան հանգած նորա աչքերից
Դա էր աւելի արտի յոյս կտրում:
Այսպէս է անա երբեմն պատահում
Արեւամտի ժամին փառահեղ
Երբ կառքը ցորեկի ոսկեղէն ծովում
Կարծես հալվելով անհետ է եղել.
Կովկասի ձիւները միմիայն մի վայրկեան
Իրենց քրմագոյն շողը պահելով
Փայլում են մութի մէջը հեռաւոր.
Բայց այդ շող աղօտ եւ կիսակենդան
Ցոլման չէ կարող հանդիպել դաշտից.
Ոչ կ'լուսաւորէ ոչ ոքի հանպան
Իրեն սառուցեալ, բարձր կատարից...:

XV.

Դրկից, ազգական արդէն խմբովին
Տխուր հանապարհը անցնելու եկին:
Գանահարելով իւր կուրծքը, անձայն,

Ալեզարդ գլխին փեշտելով մազեր,
Ծերունի Գուդալը մի վերջին անգամ
Հեծնում է իւր ձին սպիտականեր.
Գնացքը շարժեցաւ: Երեք տիւ-գիշեր
Նրանց հանապարհը պէտք է որ տեւէր:
Ոսկորների մոտ ինն, պապենական
Փորած է կուսին հանգիստ ապաստան:
Նոյն այս Գուդալի նախնիքներից մին,
Մարդկան, գիւղերի կողոպտիչ յայտնին,
Հիւանդանալով երբ մահին մտաւ
Ու ապաշխարանքի ժամն հասած տեսաւ,
Իբրեւ քաւութիւն անցեալ մեղքերին
Մի եկեղեցի շինել խոստացաւ
Նա հատարեայ ժայռերի գլխին,
Ուր հողմի եւեթ երգն է լսելի,
Ուր թռչում էր գէր ցինը ատելի:
Եւ Կազբէկ սարի ձիւներում մի օր
Բարձրացաւ յանկարծ տանար մենաւոր,
Եւ ոսկորները այն ապիրատին
Իրենց հանգիստը անդ կրկին գտին.
Իսկ ժայռն ազգական երկնի ամպերին
Գերեզմանատան առաւ կերպարանք.—
Կարծես յեռ-մահի բնակատեղին
Երբ երկնին է մոտ, աւելի է տաք.
Կարծես մարդկանցից հեռաւոր մի տեղ
Վերջին հունն էլ չի կարող աղմկվել...:
Ի զուր. մեռելները բնաւ չը գիտեն
Վիշտ կամ խնդութիւն անցեալ օրերին:

XVI.

Կապոյտ երերի տարածութիւնում
Մինը արբազգեաց հրեշակներից
Ոսկի թեւերովը էր սրլանում
Ու մի մեղաւոր հոգի աշխարհից
Իւր բազուկների մէջ գրկած տանում:
Եւ յուսոյ՝ հաղցրիկ խօսք մրմնջալով
Նրա կասկածները տակաւ փարատում,
Մեղքի, տանջանքի հեսքերը սիրով
Իւր արտասուքով նրանից ջնջում:
Հեռուից արդէն ձայները դրախտի
Լսելի էին, երբ, յանկարծակի
Բաց նանապարհին կտրելով մէջ տեղ
Փրփրեց անդունդից ոգին դժոխքի...
Նա հզօր էր, ինչպէս մրրրիկ անեղ
Փայլում էր ինչպէս հոսանք կայծակի
Ու անմիտ լրբութեամբը ամբարտաւան,
Ասում էր գոռոզը—„նա իմս է միայն“:

Սարսափը աղօթքով մեղմացնելով
Պահպան հրեշակի սեղմվեցաւ ստին
Խղճուկ Թամարի հոգին մեղաւոր:
Նրա մօտ կրկին Դեւը կանգնած էր:
Բայց, երկի՜նք, նրան ո՞վ կը նանաչէր.
Որպիսի՜ մի չար նա հայեացք ունէր,
Ինչպէ՜ս նա լի էր թոյնով մահառիթ
Մի թշնամութեան, որ չունի վախճան.
Եւ անշարժ դեմքիցը փչում էր սաստիկ
Սոսկալի ցուրտը գերեզմանական:

„Խաւարի ոգի, աչքիցս կորիր,“
Երկնի առաքեալը պատասխան տուաւ
Բաւ է որչափ դու յաղթանակեցիր,
Բայց դատաստանի ժամն այժմ հասաւ.
Եւ օրհնեալ լինի Աստուծոյ վճիռ։

«Խաւարի ոգի, աչքիցս կորիր,»
Երկնի առաքեալը պատասխան տուաւ.—
Բաւ է որչափ դու յաղթանակեցիր,
Բայց դատաստանի ժամն արդէն հասաւ,
Եւ օրհնեալ լինի Աստուծոյ վճիռ։
Փորձութեան օրեր անցել են արդէն,
Պատմութեանի հետ—երկրի հողերէն
Նրանից ընկաւ մեղքերի շղթան։
Սպասում էինք, գիտցիր, մենք նրան։
Այն հոգիներից է նրա հոգին
Որոնց կեանքը է՝ սատիկ տանջանքի,
Անհասանելի մխիթարութեան
Եւ ուրախութեան մի հատիկ վայրկեան։
Մի այլ զանգուածից Արարիչ Աստուած
Կենդանի լարեր է կերտել նրանց.
Նրանք չեն ստեղծուած աշխարհի համար,
Եւ ոչ աշխարհը նրանց համար։
Սոսկալի գնով քաւել է արդէն
Նա իւր կասկածներ եւ մեղքեր ամէն....
Նա շատ է տանջվել եւ շատ է սիրել
Եւ սիրոյն համար դրախտն է բացվել»։

Եւ հրեշտակը մի խիստ հայեացքով
Նայեց մի վայրկեան փորձողի վերան,
Եւ ուրախ, զուարթ՝ թեւերը թափ տալով
Երկնի փայլի մէջ նա անհետ եղաւ։
Իսկ յաղթահարված Դեւը անիծեց
Իւր անուրջքները ու ցնորքները անմիտ
Եւ կրկին մնաց նա ամբարհաւան

Աշխարհում մենակ ինչպես եւ առաջ
Միշտ առանց յուսոյ եւ առանց սիրոյ...։

Կոյշաուր հովտին կից ժայռի լանջին
Դեռ պանպանուած են մինչեւ մեր օրեր
Հին աւերակաց տխուր բեկորներ։
Պատմութիւնները դեռ նրանց մասին
Փոքր տղայոց սոսկումն պատճառող
Լի են զանազան աւանդութիւններով...
Ստուերի նման մի լուռ յուշարձան
Այն սանչելի օրերին վկան
Սեւին է տալիս ծառերի միջում։
Ներքեւում սփռուած առլ է տեսնվում.
Բոլոր շրջական ծլում է ծաղկում.
Եւ անհերդաշնակ ձայների հնչիւն
Խառնվում է կորչում. հեռուից եկող
Կարաւանները են հանում ղօղանջիւն
Եւ բարձր մեգերից զանավիժվելով
Փայլում փրփրում է գետը խոխոջուն.
Եւ յաւիտենական մի առոյգ կեանքով,
Ջովով, արեւով եւ գարնան գեղով
Կատակ անելով բնութիւնն է խայտում,
Ինչպես մի մանուկ անհոգ եւ սիրուն։

Բայց ժամանակաւ այնչափ բաղդաւոր
Ամրոցը այժմ տրտում է կանգնած
Ինչպես որ մի խեղն ծերուկ ալեւոր
Իւր որդիներիցը երկարակեաց։
Եւ աներեւոյթ նրա բնակիչներ

Լուսնի լուսին են միայն սպասում.—
Յայնժամ է նրանց տօն եւ ազատութիւն—
Բզզում վազում են ամեն անկիւններ։
Գորշ սարդը, այդ նոր անապատական
Ժիր գործում է իւր ոստայնի թելեր.
Կայտառում են ուրախ՝ տանիքի վերան
Իրենց ընտանեօք կանաչ մողէսներ
Եւ զգաստ օձը իւր ծերպից մթին
Դուրս սողոսկելով առաջ է սահում
Դեպի սալքարը հին մեծ գաւիթին.
Մերթ օղակ-օղակ է նա ծալվվում,
Մերթ պարզվում է բոլոր երկայնքով
Եւ փայլում իբրեւ սուսեր պողպատի,
Որ մոռացուած է դաշտում հին մարտի
Ընկած հերոսին անպէտ դառնալով...։
—Խոր ամայութիւն է շուրջանակի,
Ոչ ուրեք մի հետ անցեալ վիճակի.
Դարերը ջանքով սրբել են նրան
Եւ յիշեցնում չէ բնաւ մի բան,
Գուդալի անցեալ փառաւոր անուն,
Եւ կամ թե նորա աղջկան սիրուն...։
Բայց եկեղեցին սեպ ժայռի ծայրին
Ուր ամփոփուած է նրանց ոսկրոտին
Սուրբ զօրութիւնով պահպանուած զոլով,
Մեգով պարփակուած, կանգուն է ց'այսօր.
Եւ նրա դնռերի մօտ զերթ պահակներ
Կանգնած են միայն սեւ հատաքարեր—
Ձիւնի շեղջերից ունելով ծածկոց,
Եւ զրանի փոխան նրանց կուրծքերին

Ցաւիտենական փայլում է սառոյց:
Քնոտ հիւսերի կոյտեր ահագին
Սառնաշունչ բուքից յանկարծուս բռնված
Ջրվեժի նման ժայռ ու պարեխից
Կախուած են չորս կողմը յօնքերնին կիտած:
Այնտեղ եւ հողմը օդն է աղմկում,
Սիպտակ պատերից ձիւնը փչելով,
Մերթ երգ երկայն է սուլել սկսում,
Երբեմն կանչում է պահնորդներին:
Հեռաւոր տեղեր՝ լուրեր առնելով
Այս կողմեր եղած տանարի մասին,
Արեւել կուսից ամպերը միայն
Խմբով դիմում են երկրպագութեան.
Եւ մահարձանաց այդ խումբի վերան
'Ի վաղուց հետէ ոչ ոք չէ սգում,
Մաղձաղէմ ժայռն Կազբէկի լերան
Ագահաբար իւր աւարն է հսկում.
Ու յաւիտենական տրտունջը մարդուն
Էլ չի վրդովիլ նրանց հանգիստն անհուն:

Բիւրատ:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ ԳԱ ՍՍՀ
Ա. ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3702

2013